ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/65

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Արտաշատի համայնքապետարան

Բողոքաբեր՝ «Ուկռինվեստ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Ուկռինվեստ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մկրտչյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնանշման հարցում, ճանապարհային գծանշման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 12.05.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել Արտաշատի համայնքապետարանի կողմից ճանապարհային գծանշումների ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

- դադարեցնել հանձնաժողովի՝ 05.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության որոշման 1-ին կետով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը,
- դադարեցնել հանձնաժողովի՝ 05.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 3.5 կետով «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու մասին որոշումը,
- դադարեցնել հանձնաժողովի՝ 05.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 5.5 կետով «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից կազմված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու մասին որոշումը,
- դադարեցնել հանձնաժողովի՝ 06.05.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշման 4-րդ կետով կայացված և www.gnumner.am կայքում 08.05.2020թ.-ին հրապարակված «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 12.05.2020թ.-ին:

13.05.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/65 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

26.05.2020թ.-ին և 11.06.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 26.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.06.2020թ.-ին:

2. «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ուկռինվեստ» ՍՊԸ-ն 12.05.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար՝ «ճանապարհային գծանշումների ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացումը եղել է www.armeps.am համակարգի միջոցով 27 ապրիլ 2020 թվականին ժամը 10:00-ին:

Համաձայն Ընթացակարգի հրավերի սահմանվել է. մասնակցի կողմից գնային առաջարկի ներկայացման հետևյալ կարգը.

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5.2 կետի բ ենթակետի համաձայն՝ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման նաև սույն հրավերով ճանապարհային գծանշումների ծառայությունների գնման դեպքում, մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով սույն հրավերով սահմանված ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների հանրագումարը, նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5.3 կետի համաձայն՝ Եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Ընթացակարգի հրավերի կնքվելիք պայմանագրի նախագծի (Հավելված 6) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներում նշում է կատարվել, որ Գնային առաջարկին կցել Հրավերի պայմանագրի նախագծի հավելված թիվ 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին կից թիվ 1 աղյուսակի (ներկայացված է ստորև) յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գները և մասնակցի գնային առաջարկը նշված ծառայությունների միավորի գների հանրագումարն է, իսկ պայմանագրի առավելագույն գինը 1000000 ՀՀ դրամ է, ինչպես նաև պատվիրատուի կողմից նշվել է յուրաքանչյուր տեսակի ծառայության մատուցման առավելագույն քանակը:

Թիվ 1 աղյուսակ

Հ/Հ	Անվանում	Չափի միավոր	Ծառայության մատուցման մեկ Միավորի առավելագույն գինը/ՀՀ դրամ	Առավելագույն քանակը	Ընդանուր գին
1	Ճանապարհային գծանշում 1. 3	գծամետր		3200	
2	Հետիոտնային անցում 1. 14. 1	քմ		300	
3	Կանգ առ գիծ 1. 12	քմ		15	
4	Երթուղային տրանսպորտի միջոցների կանգ առ գիծ. 1. 17	գծամետր		160	

Ընթացակարգի հայտերի բացումը եղել է www.armeps.am համակարգի միջոցով 27 ապրիլ 2020 թվականին ժամը 10:00-ին:

Ընթացակարգին հայտեր են ներկայացրել թվով 5 մասնակից, որոնցից «Ուկռինվեստ» ՍՊԸ-ն, Արման Սաֆարյան Ա/Ձ-ն և Նաիրի Թորոսյան Ա/Ձ-ն գնային առաջարկը ներկայացրել են մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, իսկ «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ն և «Պրոգրես լայն» ՍՊԸ-ն գնային առաջարկը ներկայացրել են մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող միավորի գների հանրագումարի գնով:

Կարևորում ենք նաև այն, որ Ընթացակարգի հրավերի Գնային Առաջարկի N 2 հավելվածով սահմանված է հետևյալը՝

Ուսումնասիրելով «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, -ն

առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով. մասնակցի անվանումը

Եվ բոլոր մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներով՝ մասնակիցները առաջարկել են պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Ընդհանուր գինը/Առանց ԱԱՀ-ի
1	«Ուկռինվեստ» ՍՊԸ	651000
2	Արման Սաֆարյան Ա/Ձ*	744744
3	Նաիրի Թորոսյան Ա/Ձ	813333
4	«Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ*	2628
5	«Պրոգրես լայն» ՍՊԸ*	3676

«Արման Սաֆարյան Ա/Ձ-ի, «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ի և «Պրոգրես լայն» ՍՊԸ-ի գնային առաջարկներից երևում է, որ նրանց ներկայացրած գնային առաջարկները կատարվել են առանց ԱԱՀ-ի հաշվարկի:

Արտաշատի համայնքապետարանի 2020թ. գնումների պլանով նախատեսված 34921140/1 միջանցիկ ծածկագիրով՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) ճանապարհային գծանշումների համար նախատեսված է 1000000 ՀՀ դրամ և ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգը կազմակերպված չի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05 մայիս 2020 թվականի ժամը 10:00-ի նիստին (Արձանագրություն N 2) գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ.

3.5 «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ ծառայությունների մատուցման մեկ միավորների առավելագույն գների հանրագումարը չի համնկնում գնային առաջարկին որով գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

5. 5 «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից կազմված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ ծառայությունների մատուցման մեկ միավորների առավելագույն գների հանրագումարը չի համնկնում գնային առաջարկին որով գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Որից հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05 մայիս 2020 թվականի ժամը 10:00-ի նիստին (Արձանագրություն N 2) գնահատող հանձնաժողովը որոշում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 40-րդ կետի 4-րդ ենթակետի

համաձայն մերժել «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի, Նաիրի Թորոսյան Ա/Ձ-ի և Արման Սաֆարյան Ա/Ձ-ի հայտերը:

Իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06 մայիս 2020 թվականի ժամը 16:00-ի նիստին (Արձանագրություն N 3) գնահատող հանձնաժողովը որոշում է Օրենքի 34-րդ հոդվածի ի-ին մասի 6-րդ կետի համաձայն «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել, որից հետո www.gnumner.am կայքում պատվիրատուն 08 մայիս 2020 թվականի հրապարակում ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը՝ ըստ որի անգործության ժամկետը 5 օրացուցային օր է և այն որ Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշը՝ նվազագույն գնային առաջարկն է:

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել “X”/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, հազ. դրամ/
1	«Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ	X	2628
2	«Պրոգրես լայն» ՍՊԸ		3676

«Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք)՝ մասնավորապես.

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Պայմանագրի գինը կարող է լինել գործոնային, երբ պայմանագրի գինը փոփոխվում է պայմանագրով նախատեսված

պայմանների (գործոնների) փոփոխության ազդեցությամբ: Հակառակ դեպքում պայմանագրի գինը կայուն է, և կողմերը պարտավոր են պայմանագրային պարտավորությունները ողջ ծավալով կատարել պայմանագրի գնի շրջանակում.

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշում¬ները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Կարգի 32-րդ Կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով.

Կարգի 32-րդ Կետի 23-րդ ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, հրավերով սահմանվում է նաև ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը, իսկ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով այդ առավելագույն գների հանրագումարը՝ նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

1) ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

2) ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

3) ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

4) Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

5) Ք-ն մատուցված ծառայության քանակն է.

Կարգի 40-րդ Կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

Կարգի 51-րդ Կետի համաձայն՝ Պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում, ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև երեք տարվա ընթացքում: Եթե հրավերում և

պայմանագրում նշված չէ, որ պայմանագրի գինը գործոնային է, ապա պայմանագրի գինը համարվում է կայուն՝ անկախ պայմանագրի կատարման ժամկետից:

Կարգի 52-րդ Կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Եթե պայմանագրի գինը կայուն է, ապա՝ մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր.

Այսպիսով, Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար՝ «ճանապարհային գծանշումների ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկին վերաբերվող պահանջները չեն համապատասխանում Օրենքի և Կարգի պահանջներին, մասնավորապես՝

1. Պատվիրատուն՝ խախտելով Կարգի 52-րդ Կետի 1-րդ ենթակետի պահանջը, Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրիր – գնման ժամանակացույցով, մասնակիցներից պահանջել է՝ գնային առաջարկին կից ներկայացնել թիվ 1 աղյուսակը:

2. Պատվիրատուն՝ խախտելով Կարգի 32-րդ Կետի 23-րդ ենթակետի պահանջները, մասնակիցներից Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5. 2 կետի բ ենթակետով, մասնակիցներից պահանջել է՝ ճանապարհային գծանշումների ծառայությունների գնային առաջարկը ներկայացնել՝ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում նախատեսված կարգով, իսկ եթե Կարգի 32-րդ Կետի 23-րդ ենթակետով նախատեսված լիներ նաև ճանապարհային գծանշումների ծառայությունների գնման դեպքում, ապա այս պարագայում Ընթացակարգի հրավերով պետք է սահմաներ ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավորի առավելագույն գինը, որը հրավերով սահմանված չի:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ Ընթացակարգի հրավերով սահմանվել է ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման առավելագույն քանակը, ապա մասնակիցներին հնարավորություն է տրվել գնային առաջարկը ներկայացնել մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, ինչպես և արել է «Ուկռինվեստ» ՍՊԸ-ն: Սակայն ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05 մայիս 2020 թվականի ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3. 5 և 5. 5 կետերով համապատասխանաբար արձանագրվել է, որ «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված և կազմված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ ծառայությունների մատուցման մեկ միավորների առավելագույն գների հանրագումարը չի համնկնում գնային առաջարկին, որով գնային

առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ապա գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության իր որոշման 1-ն կետով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն մերժել է «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի, Նաիրի Թորոսյան Ա/Ձ-ի և Արման Սաֆարյան Ա/Ձ-ի հայտերը:

Իսկ այն մասնակիցների հայտերը, որոնց գնային առաջարկները ներկայացվել են մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող միավորի գների հանրագումարի գնով, ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06 մայիս 2020 թվականի ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրության գնահատող հանձնաժողովի որոշման 1-ին և 2-րդ կետերով գնահատվել են բավարար:

Վերոնշյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ մասնակիցների հայտերը գնահատելիս ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ պետք է առաջնորդվեր Կարգով և հաշվի առներ այն փաստը, որ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ցանկացած մասնակցի գնային առաջարկը թե մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող միավորի գների հանրագումարի գնով և թե մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով ներկայացված լինելը՝ նշանակում է, որ մասնակիցը առաջարկում է պայմանագիրը կատարել իր կողմցի հայտով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գներով և այս պարագայում ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի հայտը պետք է գնահատեր բավարար, ապա դրանից հետո նոր ընտրված մասնակից ճանաչեր և նոր կկարողանար ընտրված մասնակցի հետ անգորշության ժամկետի ավարտից հետո պայմանագիրը կնքել՝ միայն պայմանագրի կատարման համար ընտրված մասնակցի առաջարկած ընդհանուր գնով (Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ, Կարգի 32-րդ Կետի 8-րդ ենթակետ, Կարգի 51-րդ Կետ և Կարգի 52-րդ Կետի 1-ին ենթակետ):»:

Վերոգրյալով պայմանավորված, «Ուկռինվեստ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել Արտաշատի համայնքապետարանի կողմից ճանապարհային գծանշումների ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

- դադարեցնել հանձնաժողովի՝ 05.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության որոշման 1-ին կետով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը,

- դադարեցնել հանձնաժողովի՝ 05.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 3.5 կետով «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու մասին որոշումը,
- դադարեցնել հանձնաժողովի՝ 05.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 5.5 կետով «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից կազմված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու մասին որոշումը,
- դադարեցնել հանձնաժողովի՝ 06.05.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշման 4-րդ կետով կայացված և www.gnumner.am կայքում 08.05.2020թ.-ին հրապարակված «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Ի լրումն ներկայացված բողոքի, Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով)՝ Արտաշատի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար՝ «ճանապարհային գծանշումների ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնանշման հարցման հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 1-ին մասի 8. 1-ր կետի համաձայն՝ «…Հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապա¬րակում է գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը…», պետք է հրապարակեր գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչը հանձնաժողովի կողմից չի արվել (ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետ):

Իսկ այն, որ պատվիրատուն պնդում է թե մասնակիցը Գնային առաջարկը պետք է ներկայացներ մատուցվելիք յուրաքանչյուր ծառայության միավոր գների հանրագումարի

տարբերակով, ապա այդ դեպքում Հանձնաժողովը պետք է բարձրաձայներ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված, որը կգոյանար ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների հանրագումարի արդյունքում, որոնք իրենց հերթին Կարգի 32-րդ Կետի 23-րդ ենթակետի համաձայն՝ «Հրավերով նախատեսվում է նաև, որ՝ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, հրավերով սահմանվում է նաև ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը, իսկ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով այդ առավելագույն գների հանրագումարը՝ նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

1) ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

2) ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

3) ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

4) Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

5) Ք-ն մատուցված ծառայության քանակն է. », պետք է սահմանվեին հրավերով:

Հանձնաժողովը «Ուկոինվեստ» ՍՊԸ-ի հայտը գնահատելիս պետք է առաջնորդվեր նրանով, որ «Ուկոինվեստ» ՍՊԸ-ն գնային առաջարկը ներկայացնելիս չեր կարող հաշվի առներ ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների հանրագումարը, քանի որ դրանք սահմանված չեն եղել, այլ հրապարակային եղել է միայն այն, որ Արտաշատի համայնքապետարանի հրապարակված գնումների պլանով 34921140/1 նախատեսված միջանցիկ ծածկագրով՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) ճանապարհային գծանշումների համար նախատեսված է 1000000 ՀՀ դրամ, որի մասին նաև հրավերի կնքվելիք պայմանագրի նախագծի (Հավելված 6) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածում է նշում կատարվել «. . . առավելագույն գինը 1000000 ՀՀ դրամ է. . . »:

Եվ այս պարագայում մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գնահատելիս պետք է հաշվի առնել այն, որ դրանք ոչ թե մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող միավորի գների հանրագումարն են, այլ մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գինն են և պայմանագիրը

ենթակա է կատարման մասնակիցների կողմից գնային առաջարկով ներկայացված պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Իսկ Վերոնշյալ բանաձևը կիրառելի չէ, քանի որ հրավերով՝ ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը և Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինը զրո են և/կամ սահմանված չեն:

Օրինակ՝ եթե Մասնակցի ՄԳ-ն՝ ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը կազմեր 3600 ՀՀ դրամ է (ծառայության 4 տեսակի համար մասնակցի առաջարկած հանրագումարային գինը լիներ), ապա այդ թիվը պետք է բաժանել զրոի ՆԳ, դրանից հետո բազմապատկել կրկին անգամ զրոի Ծ և բազմապատկել մատուցված ծառայության քանակին Ք (օրինակ մատուցված քանակը 3 է), որի արդյունքում բանաձևը կիրառելի չի լինում, իսկ եթե պատվիրատուն Հրավերով սահմաներ Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինը, ապա այդպիսի խնդիր չեր առաջանա, քանի որ ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գները գումարելով հնարավոր կլիներ ստանալ ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գինը և բանաձևի միջոցով հնարավոր կլիներ կատարել մաթեմատիկական գործողություն:

Ստորև աղյուսակով ներկայցնում ենք հաշվարկը առանց վերոնշյալ գործակիցների (Հրավերի պահանջներին համապատասխան) և այն տարբերակով, եթե պատվիրատուն օրինակ սահմանած լիներ՝ ծառայության մատուցման համար առավելագույն միավոր գների հանրագումարը 3800, իսկ ծառայության տեսակների առավելագույն միավորի գինը 1-1400, 2-1800, 3-250 և 4-350 (թվերը պայմանական են):

	ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.	ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է	Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է	Ք-ն մատուցված ծառայության քանակն է	ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ
Առանց առավելագույն միավոր գնի և առավելագույն միավոր գների հանրագումարի	3600	--------	--------	3	Հնարավոր չէ ստանալ առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարը
	3600	--------	--------	3	
	3600	--------	--------	1	
	3600	--------	--------	8	

Առավելագույն միավոր գնի և առավելագույն միավոր գների հանրագումարի սահմանման դեպքում	*3600*	*3800*	*1400*	*3*	*3978. 94*
	3600	*3800*	*1800*	*3*	*5115. 78*
	3600	*3800*	*250*	*1*	*236. 84*
	3600	*3800*	*350*	*8*	*2652. 63*

Ուսումնասիրելով վերոգրյալը, նախորդ դիրքորոշումները և բողոքով ներկայացված ապացույցներն ու հիմնավորումները՝ գտնում ենք, որ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով)՝ «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը և դրա հետ կապված գործողությունները իրավաչափ չեն:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Ուկռինվեստ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

- պարտավորեցնել Արտաշատի համայնքապետարանի կողմից ճանապարհային գծանշումների ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից 12.05.2020թ.-ի բողոքով ներկայացված պահանջները կատարել և/կամ
- պարտավորեցնել Հանձնաժողովին Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար՝ ճանապարհային գծանշումների ծառայությունների ձեռքբերման նպատակով «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու դեպքում պայմանագիրը կնքել ընտրված մասնակցի հետ՝ պայմանագրի կատարման համար առաջարկված ընդհանուր գներով, առանց Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5.2 կետի «բ» ենթակետի և կնքվելիք պայմանագրի նախագծի (Հավելված 6) 4.2 կետի վերջին պարբերության կիրառման:

Ընկերությունը ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Ուկռինվեստ» ՍՊԸ-ն բողոքարկել է, ոչ թե Արտաշատի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար՝ «ճանապարհային գծանշումների ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնանշման հարցման հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) անհամապատասխանությունը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջներին, այլ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ

նաև՝ Հանձնաժողով) գործողությունները («Ուկռինվեստ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և այլն):

Պատվիրատուի ներկայացրած դիրքորոշման վերաբերյալ հարց է ծագում, եթե Հրավերով պատվիրատուն սահմաներ.

Օրինակ՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում (Օրինակ՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1) արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մերժում է մասնակցի հայտը:

Ապա դրանից հետո բացման և գնահատման նիստի ընթացքում՝ արձանագրեր մասնակցի ներկայացրած հայտում (ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունում) անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ և առաջնորդվեր Հրավերի համապատասխան պահանջով, այլ ոչ թե Օրենքի և Կարգի պահանջներով, և մերժեր մասնակցին՝ առանց մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնելու և մասնակցին անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն տալու, չնայած այն բանի, որ դա կհակասեր Օրենքի և Կարգի պահանջներին:

Պատվիրատուն Հրավերով սահմանել է Օրենքի և Կարգի պահանջներին անհամապատասխան և/կամ թերի պահանջներ, որից հետո «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի հայտը գնահատելիս առաջնորդվել է դրանցով, այլ ոչ թե Օրենքի և Կարգի պահանջներով:

Հաշվի առնելով վերոգրյալը և բողոքով ներկայացված ապացույցներն ու հիմնավորումները՝ գտնում ենք, որ Հանձնաժողովը հայտերը գնահատելիս պետք է առաջնորդվեր Օրենքի և Կարգի պահանջներով, ինչի արդյունքում «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի հայտը պետք է գնահատվեր բավարար և «Ուկռինվեստ» ՍՊԸ-ն որոշվեր հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից:»:

Ընկերությունը ներկայացրած մեկ այլ դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Ուկռինվեստ» ՍՊԸ-ն իր գնային առաջարկը ներկայացրել է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով (նույն ձևով գնային առաջարկ ներկայացրել են ևս երկու մասնակից), առաջինը հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի

(այսուհետ՝ Կարգ) պահանջները, ապա Արտաշատի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար՝ «ճանապարհային գծանշումների ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնանշման հարցման հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 1-ին մասի 5-ր կետի (ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ) պահանջները և այն, որ հրավերի կնքվելիք պայմանագրի նախագծի (Հավելված 6) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված են գնման առարկայի տեխնիկական բնութագիրը և մատուցվելիք ծառայության քանակը, քանի որ վերոնշյալ հավելվածով չեր կարող սահմանվել գնային առաջարկի ներկայացման կարգը (Հրավերի 1-ին մասի 1. 1 կետով սահմանված է՝ «Ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը. . . »):

Ինչ վերաբերվում նրան, որ Հրավերին կից կնքվելիք պայմանագրի նախագծի (Հավելված 6) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներում նշված թիվ 1 աղյուսակը պետք է կցել Գնային առաջարկին, ապա այդպիսի պահանջը հակասում է Կարգի 52-րդ Կետի 1-ին ենթակետին «Եթե պայմանագրի գինը կայուն է, ապա՝ մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր»:

Այո «Ուկռինվեստ» ՍՊԸ-ն ներկայացրել է վերոնշյալ Թիվ 1 աղյուսակը, սակայն դա չի նշանակում, որ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) կարող էր դրան հղում անելով մերժել «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի հայտը և այդ որոշումը հիմնավորել՝ նրանով թե գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ

1. Կից ներկայացված Թիվ 1 աղյուսակը չի կարելի դիտարկել, որպես գնային առաջարկ

2. Հրավերի 1-ին մասի 5. 2 կետի բ ենթակետի պահանջը և Հրավերին կից կնքվելիք պայմանագրի նախագծի (Հավելված 6) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված պահանջները չեն համապատասխանում Օրենքի և Կարգի պահանջներին և/կամ թերի են:

Իսկ եթե պատվիրատուն ցանկացել է, որ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով հայտարարված ընթացակարգի արդյունքում՝ կնքվելիք պայմանագրի միջոցով,

ճանապարհային գծանշումների ծառայությունները մատուցվեն՝ պատվիրատուի կարիքներին անհրաժեշտ քանակով (անհայտ քանակի), հաշվի առնելով մատուցվելիք յուրաքանչյուր ծառայության միավոր գները, ապա առաջին հերթին այդպիսի պահանջը պետք է բավարարվեր Կարգի 32-րդ Կետի 23-րդ ենթակետով, որով հստակ սահմանված է՝ միայն ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքերը: Իսկ եթե Կարգի վերոնշյալ կետով սահմանված լիներ նաև ճանապարհային գծանշումների ծառայությունները, ապա այս պարագայում պատվիրատուի կողմից հրավերով պետք է սահմանվեր նաև ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը և չպետք է սահմանվեր քանակ (ենթադրյալ քանակ) ծառայության յուրաքանչյուր տեսակի համար (Այո նորմատիվ իրավական ակտն մեկնաբանվում է Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ Օրենքի 41-րդ հոդվածի համաձայն):

Հաշվի առնելով վերոգրյալը, նախորդ դիրքորոշումը և բողոքով ներկայացված ապացույցներն ու հիմնավորումները՝ գտնում ենք, որ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով)՝ «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը և դրա հետ կապված գործողությունները իրավաչափ չեն:»:

3. <u>Արտաշատի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 13.05.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/7081-2020 գրությամբ դիմել է Արտաշատի համայնքապետարանին՝ հնարավորություն տալով «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից 12.05.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 18.05.2020թ.-ի թիվ 025/357 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Իպատասխան 13 մայիս 2020 թվականի գրության հայտնում ենք Ձեզ մեր դիրքորոշումը՝ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բողոքի կապակցությամբ:

Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված է՝

1. հրավերի 5. 2 կետի բ) ենթակետով՝ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման նաև սույն հրավերով ճանապարհային գծանշումների

ծառայությունների գնման դեպքում, մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով սույն հրավերով սահմանված ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների

հանրագումարը, նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով՝ /տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց/

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	34921140/1	Պայմանագրի առավելագույն գինը 1000000 ՀՀ դրամ է: Գնային առաջարկին կցել Հրավերի պայմանագրի նախագծի հավելված թիվ 1 –ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին կից թիվ 1 աղյուսակի յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գները և մասնակցի գնային առաջարկը նշված ծառայությունների	դրամ		1	Ք. Արփաշատ	Կողմերի միչև պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 աշխատանքային օր

		միավորի գների հանրագումարն է: Տեխնիկական բնութագիրը կցվում է					

3. հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով՝ /տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց/

Թիվ 1 աղյուսակ

*

Հ/Հ	Անվանում	Չափի միավոր	Ծառայության մատուցման մեկ Միավորի առավելագույն գինը/ՀՀ դրամ	Առավելագույն քանակը	Ընդանուր գին
1	Ճանապարհային գծանշում 1. 3	գծամետր		3200	
2	Հետիոտնային անցում 1. 14. 1	քմ		300	
3	Կանգ առ գիծ 1. 12	քմ		15	
4	Երթուղային տրանսպորտի միջոցների կանգ առ գիծ. 1. 17	գծամետր		160	

Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով՝ /տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց/ պարզ է դառնում որ հրավերով մասնակցից պահանջվում է գնային առաջարկը ներկայացնել ծառայության մատուցման մեկ միավորների արժեքների հանրագումարով և տեխնիկական բնութագրով հստակ նշված է՝ մեջբերում տեխնիկական բնութագրից / մասնակցի գնային առաջարկը նշված ծառայությունների միավորի գների հանրագումարն է/: Այսինքն մասնակցից պահանջվել է հայտով ներկայացնել ծառայությունների մատուցման մեկ միավորիների գները աղյուսակ թիվ 1 -ով և ներկայարած մեկ միավրիների գների հանրագումարով ներկայացնել գնային առաջարկ:

Համաձայն Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով նորմատիվ իրավական ակտն մեկնաբանվում է՝ <<Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից>>:

Հարգելի ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ խնդրում եմ Ձեր ուշադրությունը այն փաստի վրա որ բողոքարկողը հիմնականում բողոքարկում է հրավերը:

Այս պարագայում մասնակիցը կարող էր բողոքարկեր հրավերը մինչև հայտերի բացումը կամ ՀՀ գնումների մասին օրենքի 29-րդ հոդվածով պահանջեր պարազաբանում:»:

Պատվիրատուն 22.05.2020թ.-ի թիվ 025/377 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի պատասխան 20 մայիս 2020 թվականի գրության հայտնում ենք Ձեզ մեր դիրքորոշումը՝ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բողոքի մասնակցի դիրքորաշման կապակցությամբ:

Պատվիրատուն հրավերով չի սահմանել ծառայությունների մատուցման հստակ ծավալներ, այլ նշել է հնարավոր առավելագույն ծավալներ :

Օրինակ հրավերերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի աղյուսակի Ճանապարհային գծանշում 1.3 տողում նշված է առավելագուն քանակ 3200 գծամետր, բայց դա չի նշանակում որ այդ քանակի ծառայություն պետք է մատուցվի այլ հնարավոր է ընտրված մասնակիցը մատուցի 2500 գծամետրի ծառայություն ըստ պատվիրատուի կարիքի: Այդ իսկ պատճառով պատվիրատուն հստակ քանակներ չի սահմանել հրավերով, այլ հրավերով սահմանել է մեկ միավորի գներ:

Ելնելով հրավերի պահանջից մասնակիցը պետք է ներկայացնի յուրաքանչյուր ծառայության մատուցման մեկ միավորի գինը և մեկ միավորիների հանրագումարը ներկայացնի գնային առաջարկում որը ի սկզբանե սահմանված է եղել հրավերով:

Ելնելով վերագրյալից հարց է առաջանում թե մասնակիցը /Ուկռինվեստ ՍՊԸ/ ծառայաության մատուցման ինչ ծավալներից ելնելով է որ ներկայացրել է ընդանուր 781200 /յոթ հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ գնային առաջարկ, եթե հրավերով սահմանված հստակ ծավալներ չկան:

Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով՝ /տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց/ պարզ է դառնում որ հրավերով մասնակցից պահանջվում է գնային առաջարկը ներկայացնել ծառայության մատուցման մեկ միավորների արժեքների հանրագումարով և տեխնիկական բնութագրով հստակ նշված է՝ մեջբերում տեխնիկական բնութագրից / մասնակցի գնային առաջարկը նշված ծառայությունների միավորի գների հանրագումարն է/: Այսինքն մասնակցից պահանջվել է հայտով ներկայացնել ծառայությունների մատուցման մեկ

միավորիների գները աղյուսակ թիվ 1 -ով և ներկայարած մեկ միավրիների գների հանրագումարով ներկայացնել գնային առաջարկ:

Համաձայն Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով նորմատիվ իրավական ակտն մեկնաբանվում է՝ <<Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից>>:

Մասնակցի հայտը մերժվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ / հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան/ :

Այս պարագայում մասնակցի հայտը մերժվել է քանի որ մասնակիցը գնային առջարկը ներկայացրել՝ է հրավերի պահանջներին անհամապատասխան: Մասանավորապես՝ մասնակիցը հայտով թիվ 1 աղյուսակով ներկայացրել է մեկ միավորների հանրագումարը 2640 ՀՀ դրամ, իսկ գնային առաջարկով 781200 /յոթ հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ որը անհամապատասխան է հրավերի պահանջին:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/65 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Արտաշատի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ճանապարհային գծանշման ծառայությունների ձեռքբերման նպատակով 20.04.2020թ.-ին հայտարարվել է «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 27.04.2020թ.-ին ժամը 10:00-ն:

Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 1-ին մասի 5.2 կետի «բ» ենթակետի համաձայն՝ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման նաև սույն հրավերով ճանապարհային գծանշումների ծառայությունների գնման դեպքում, մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով սույն հրավերով սահմանված ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների հանրագումարը, նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է,

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է,

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է,

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է,

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Նույն հրավերի՝ 2-րդ մասի, հայտը պատրաստելու մասին հրահանգի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված գնային առաջարկ համաձայն թիվ 2 հավելվածի, որին կցվում է յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների հանրագումարը /հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին կցված աղյուսակով/:

Հրավերի թիվ 6 հավելվածի՝ կնքվելիք պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ նշվել է, որ պայմանագրի առավելագույն գինը կազմում է 1 000 000 ՀՀ դրամ: Գնային առաջարկին անհրաժեշտ է կցել Հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածի տեխնիակական բնութագիր-գնման ժամանակացույցին կից՝ թիվ 1 աղյուսակի յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գները, իսկ մասնակցի գնային առաջարկը նշված ծառայությունների միավորի գների հանրագումարն է:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել «Ուկռինվեստ» ՍՊԸ-ն, «Արման Սաֆարյան» Ա/Ձ-ն, «Նաիրի Թորոսյան» Ա/Ձ-ն, «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ն և «Պրոգրես լայն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 05.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 5.5-րդ կետի համաձայն՝ «Ուկռինվեստ»

ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծառայությունների մատուցման մեկ միավորների առավելագույն գների հանրագումարը չի համընկնում Ընկերության գնային առաջարկով ներկայացված գումարին, ինչի պայմաններում գնային առաջարկը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, որոշել է «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի, «Արման Սաֆարյան» Ա/Ձ-ի և «Նաիրի Թորոսյան» Ա/Ձ-ի հայտերը մերժել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից www.gnumner.am կայքում 08.05.2020թ.-ին հրապարակվել է Արտաշատի համայնքապետարան կարիքների համար ճանապարհային գծանշման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից 12.05.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 23-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, հրավերով սահմանվում է նաև ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը, իսկ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով այդ առավելագույն գների հանրագումարը՝ նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

1) ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է,

2) ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է,

3) ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է,

4) Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է,

5) Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնման առարկայի բնութագրի հաստատումն է: Հրավերով նախատեսվում է նաև, որ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում, հրավերով սահմանվում է ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը, իսկ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով այդ առավելագույն գների հանրագումարը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պայմանագրի գնման առարկայի բնութագրերի, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջների մասով բողոք կարող է ներկայացվել մինչև հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետը, ուստի և Բողոքներ քննող անձի քննությանը ենթակա

են միայն այն բողոքները, որոնք ներկայացվում են մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, Արտաշատի համայնքապետարանի կողմից ճանապարհային գծանշման ծառայությունների ձեռքբերման նպատակով 20.04.2020թ.-ին հայտարարված «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 27.04.2020թ.-ին ժամը 10:00-ն:

Հրավերի 1-ին մասի 5.2 կետի «բ» ենթակետի համաձայն՝ ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման նաև սույն հրավերով ճանապարհային գծանշումների ծառայությունների գնման դեպքում, մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով սույն հրավերով սահմանված ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների հանրագումարը, նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է,

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է,

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է,

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է,

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Նույն հրավերի՝ 2-րդ մասի, հայտը պատրաստելու մասին հրահանգի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված գնային առաջարկ համաձայն թիվ 2 հավելվածի, որին կցվում է յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գների հանրագումարը /հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին կցված աղյուսակով/:

Հրավերի թիվ 6 հավելվածի՝ կնքվելիք պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ նշվել է, որ պայմանագրի առավելագույն գինը կազմում է 1 000 000 ՀՀ դրամ: Գնային առաջարկին անհրաժեշտ է կցել Հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին կից՝

թիվ 1 աղյուսակի յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գները, իսկ մասնակցի գնային առաջարկը նշված ծառայությունների միավորի գների հանրագումարն է:

Հանձնաժողովի 05.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 5.5-րդ կետի համաձայն՝ «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծառայությունների մատուցման մեկ միավորների առավելագույն գների հանրագումարը չի համընկնում Ընկերության գնային առաջարկով ներկայացված գումարին, ինչի պայմաններում գնային առաջարկը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի պահանջներին, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 32-րդ կետի 23-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ օրենսդիրը հստակ սահմանել է, թե ինչ ծառայությունների գնման դեպքում է հնարավոր կիրառել Կարգի վերոնշյալ դրույթները, բացառելով այլնտրանքային մեկնաբանություն:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը, ճանապարհային գծանշումների ծառայությունների գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5.2 կետի «բ» ենթակետը լրացնելով և ապա կիրառելով Կարգի 32-րդ կետի 23-րդ կետով սահմանված պահանջները, որոնք վերաբերելի են ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգերին, գործել է ոչ իրավաչափ, որպիսի պայմաններում վերջինիս կողմից թույլ է տրվել Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջների խախտումներ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, վերջինիս վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջները ներկայացվել են Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետների խախտմամբ, քանի որ բողոքով ներկայացված հանգամանքները վերաբերում են ընթացակարգի հրավերով և նույն հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին, որպիսի պարագայում Ընկերությունը բողոք պետք է ներկայացներ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Բողոքաբերն իր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման համար կարող էր բողոք ներկայացնել գնումների հետ կապված բողոքներ քննող անձին մինչև Արտաշատի համայնքապետարանի կողմից ճանապարհային գծանշման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-20/22» ծածկագրով գնման

ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը, որպիսի պայմաններում «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ուկռինվեստ» ՍՊԸ-ի կողմից 12.05.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/65 ծածկագրով բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**